ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան 18.05.2026թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ **Պալատ**), ի դեմս գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Նեքսիա Արմենիա» Փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ **Կազմակերպություն**), ի դեմս տնօրեն Արթուր Հարությունյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ, համատեղ հիշատակվելուց, **Կողմեր**), կարևորելով գործընկերության և համագործակցության դերը Պալատի անդամների շարունակական մասնագիտական զարգացման գործընթացում՝ կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին:

1. Հուշագրի առարկան

1.1 Պալատը՝ հանդիսանալով աուդիտի և հաշվապահության ոլորտում պետության կողմից պատվիրակված գործառույթներ իրականացնող մասնագիտական կառույց, և Կազմակերպությունը՝ հանդիսանալով այդ ոլորտում մասնագիտական ծառայություններ մատուցող Պալատի անդամ ընկերություն, սույն հուշագրով համաձայնում և պայմանավորվում են հետևյալի շուրջ.

1.1.1 **Կազմակերպությունը,** ի աջակցություն Պալատի կողմից իրականացվող շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների կազմակերպման գործընթացին՝ իր մասնագետների միջոցով անվճար հիմունքով իրականացնում է մասնագիտական դասընթացներ, քննարկումներ և այլ միջոցառումներ՝ Պալատի հետ համաձայնեցված թեմաներով, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ապահովում է Նեքսիա Ակադեմայի կրթական և տեխնիկական ենթակառուցվածքների տրամադրումը համապատասխան միջոցառումների պատշաճ կազմակերպման և անցկացման նպատակով:

1.1.2 2026թ ընթացքում նախատեսվող միջոցառումները ներառում են հետևյալ թեմաները.

h/h	ԹԵՄԱ	Վարող	Պաշտոն	Տևողություն
1	ՖՀՄՍ ՓՄԿ (փոքր և միջին կազմակերպություն)-ների համար. 3-րդ խմբագրություն. նորացված պահանջներ	Արթուր Հարությունյան	Համահիմնադիր, տնօրեն	2 ժամ
2	ESG հիմունքներ. պատասխանատու և ապագային պատրաստ ընկերություններ	Արսեն Նազարյան	Խորհրդատվական ծառայությունների ղեկավար	2 ժամ
3	ՖՀՄՍ 18 – Ներկայացումն ու բացահայտումը ֆինանսական հաշվետվություններում	Արթուր Հարությունյան	Համահիմնադիր, տնօրեն	2 ժամ
4	ՖՀՄՍ 16 – Վարձակալություններ (ստանդարտի կիրառությունը և փոփոխությունները)	Արմինե Ասոյան	Աուդիտի ղեկավար	2 ժամ

5	ԱՄՍ 240 – Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում խարդախության հետ կապված աուդիտորի պատասխանատվությունը	Արմինե Ասոյան	Աուդիտի ղեկավար	2 ժամ
6	ՖՀՄՍ փոփոխություններ	Արմինե Ասոյան	Աուդիտի ղեկավար	2 ժամ

Յուրաքանչյուր միջոցառման իրականացման ժամկետները լրացուցիչ կհամաձայնեցվեն Կողմերի միջև:

1.1.3 Միջոցառումների կազմակերպումն իրականացվում է Պալատի կողմից (իրազեկում, հաշվառում, լսարան և այլն), իսկ միջոցառումների բովանդակային ապահովման, պատասխանատվության և վարման գործառույթները վերապահվում են Կազմակերպությանը և վերջինիս կրթական ստորաբաժանմանը՝ «Նեքսիա Ակադեմիա»-ին:

1.1.4 Յուրաքանչյուր միջոցառմանը Կազմակերպության կողմից անվճար հիմունքով մասնակցում են 2-3 աշխատակից՝ Կազմակերպության ներկայացմամբ:

1.1.5 Հետագա տարիների համար 1.1.2 կետում նշված թեմաները կթարմացվեն՝ մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 31-ը:

1.1.6 Անհրաժեշտության դեպքում Կազմակերպությունն աջակցում է Պալատի որակավորման ծրագրում ներառված բարձր առաջադիմությամբ մասնակիցների պրակտիկայի կազմակերպմանը և աշխատանքի տեղավորմանը:

1.1.7 Կազմակերպությունն, ըստ անհրաժեշտության, գործուղում է համապատասխան մասնագետների Պալատի կողմից կազմակերպվող մասնագիտական քննարկումներին:

1.1.8 Կազմակերպությունն աջակցում է Պալատի կողմից իր անդամների և որակավորման ծրագրի մասնակիցների համար մասնագիտական ոլորտում կայացած մասնագետների հետ հանդիպումների կազմակերպմանը՝ վերջիններիս գիտելիքների և անձնական փորձի ներկայացման նպատակով:

1.2 **Կողմերը** նպատակահարմար են գտնում մշտապես քննարկել և մշակել նաև համագործակցության առավել արդյունավետ այլ ձևաչափեր:

2. Հուշագրի գործողության ժամկետը

2.1 Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է անժամկետ:

3. Այլ պայմաններ

3.1 Հուշագիրը կազմված և ստորագրված է երկու օրինակներից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Օրինակներից մեկը պահվում է **Պալատի**, իսկ մյուսը՝ **Կազմակերպության** մոտ:

4. Կողմերի հասցեները և ստորագրությունները

«Պալատ»

"Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ" ՀԿ

Ք. Երևան 0051, Մոնթե Մելքոնյան 46/2 շենք

ՀՎՀՀ 02537979

Հեռ.՝ *+37410249178*

E-mail: info@caaa.am

Գործադիր տնօրեն ՝ Հայկ Մնացականյան

«Կազմակերպություն»

«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ

Հ, ք. Երևան 0012, Կոմիտաս 15/7, Սքվեր բիզնես կենտրոն, 3-րդ հարկ

ՀՎՀՀ՝ *01529594*

Հեռ.՝ *+37477 229021*

E-mail: office@nexia.am

Տնօրեն՝ Արթուր Հարությունյան